

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒՆ ՓԱՍՏՆ Է

«Նրանց¹ գործը մարդկության գործն է» (Pro Armenia, 25 մայիսի 1901): Ֆրանսիացի հռչակավոր գրող Անատոլ Ֆրանսի այս խոսքը կարող է բնաբան ծառայել այն հարուստ փաստագրական, պատմագիտական գրականության համար, որը Ֆրանսիայում ստեղծվել է Հայոց Մեծ եղեռնի մասին:

Համիդյան ջարդերից անմիջապես հետո ֆրանսիայի արագործնախարարությունը հրատարակեց փաստաթղթերի «Դեղին գիրք» ժողովածուն, հաղափական խոշոր գործիչ Կլեմանսոյի (հետագայում արագործնախարար, վարչապետ) նախաբանով լույս տեսավ «Հայաստանի կոտորածները» փաստագրությունը: Այդ թեմային նվիրված գրքերով եւ մեմագրություններով հանդես եկան շատ հասարակական-հաղափական գործիչներ, ինչպիսիք են Ա. Վանդալը, Ա. Լըրուա Բոլիոն, Կարա դը Վոյը, Ժ. Ֆինոն, Է. Լամին, Է. Լավիաը, Շ. Սեյնաբոսը եւ ուրիշներ: Ցեղասպանության համիդյան շրջանի իրադարձությունները դատապարտեցին նաեւ մի շարք ֆրանսիացի խոշոր հոգեւոր գործիչներ՝ Պ. Քիարը, աբբա Պիզանին, աբբա Լ. Գոդալը, Ժ. Ապպիան եւ շատ ուրիշներ:

Այսօր այդ հարուստ գրականության մեջ իր ուրույն լուման է ներդնում գրող, հրապարակախոս Ֆիլիպ Վիդրլիեն: Վերջերս «Ամարաս» հրատարակչությունը տպագրել է նրա «Թուրքական գիշեր» փաստագրական գիրքը՝ վաստակաշատ Պարգև Շահբազյանի թարգմանությամբ²:

Ն. Վիդրլիեն ոճագործությունը վկայող իր նորահայտ փաստերը շարադրում է ոչ պատմագրական ավանդական ոճով, այլ օգտագործում է պատումի գեղարվեստական տարրեր: Նա գրում է, թե նախքան երիտթուրքական հեղափոխությունը ոչ ոք չէր կարողացել հրապարակավ լուսանկարել Համիդին: Ելլըզլի պալատից նրա վտարվելու ժամանակ գերմանացի լուսանկարիչ Օտտո Կիելը կարողացավ դա անել եւ հաղափակիրք Եւրոպան տեսավ, թե արյունոտ սուլթանի անմարդկային դեմքը որքան էր համապատասխանում նրա գործած ոճիին:

Ն. Վիդրլիեն հենվում է հիմնականում եւրոպական դիվանագետների վկայությունների, հյուպատոսների հեռագրերի եւ զեկուցագրերի վրա, որոնք կազմում են գրքի փաստագրական հենքը: Այնուհետեւ գեղարվեստական պարզ ու ընկալելի ոճով ստեղծում է իրողությունների պատմական խորապատկերը: Հեղինակը, թեւ խստորեն չի պահպանում իրադարձությունների ժամանակագրական կարգը, բայց դա չի խանգարում, որ ընթերցողը պատկերացում ստանա ամեն մի դրվագի մասին:

Այսպես՝ Դիարբեքիրում Ֆրանսիայի հյուպատոսը 1895 թ. նոյեմբերի 2-ին Պոլսում Ֆրանսիայի դեսպանին հեռագրել է. «Քաղաքը կրակի եւ արյան մեջ է» (էջ 18): Դեսպանը անմիջապես հեռագրով պահանջում է. «Շտապ տեղեկացրե՛ք, թե որտեղի՞ց սկիզբ առավ վերջին սադրանքը: Մեծ վեճիրը պնդում է, թե ընդհարումն սկիզբ առավ հայերի կողմից մզկիթների վրա

¹ Այն է՝ հայերի:

² Ֆիլիպ Վիդրլիեն, Թուրքական գիշեր, թարգմ. Պարգև Շահբազյան, Երևան, 2010:

կատարված մի հարձակումից: Ճիշտ է դա» (էջ 18): Հյուպատոսի ծածկագիր պատասխանը. «Մզկիթների վրա հայերի հարձակումը զուտ հերյուրանք է: Կոտորածը տեղեց ամբողջ օրը, եւ վերջը դեռ չի երեսում» (էջ 18):

Հյուպատոս Մերենն Դիարբեքիում ծայր առած իրադարձությունների մասին կազմել է մի ընդարձակ գեկուցագիր, որից պարզվում է տեղի ունեցածի ողջ ահավորությունը. գավառում մոխրի էր վերածվել 119 գյուղ, իսկ զոհվածների եւ անհետ կորածների թիվը հասնում էր 30.000-ի:

Երբ ամեն տեսակի վարձկանները, ստահակներն ու անբանները լսում էին կոտորածի լուրը, ասում էին. «Մեզ թողե՛ք, որ գնանք Խաթանբուլ. վեհապետը թույլ է տվել, որ սպանենք հայերին» (էջ 21): Զեկուցագրի մեջ ասվում է նաեւ. «Ոստիկանությունն ու զորք միջամտեցին միայն զոհերին հարվածելու համար» (էջ 20): Հետեաբար հյուպատոսի եզրակացությունը մեկն էր՝ այդ ամենը հրահրել են իշխանությունները: Նույնն է վկայել նաեւ մեկ ուրջ ականատես՝ անգլիացի ազգագրագետ Վ. Ռեմսին: Դիարբեքիի նահանգում տեղի ունեցածը նույն արյունալի ձեռագրով կրկնվեց մյուս բոլոր նահանգներում, - գրում է Ֆ. Վիդլլին:

Եւրոպայում հնչեցին սուլքանի նյութած ոճիւր դատապարտող հատուկենտ, բայց ուժեղ ձայներ:

Ժողովրդավար հայտնի գործիչ Ժ. Ժորեսը, որին Ֆրանսիայի Ժողովուրդն ընտրել էր Ազգային ժողովի անդամ, այդ մարմնի բարձր ամբիոնից հայտարարեց. «Սուլքանն է, որ կազմակերպեց եւ ղեկավարեց կոտորածները» (էջ 27):

Կլեմանսոն «Էկո դը Պարի» թերթում հաղափակիրք մարդկությանը պախարակում էր, որ այդպիսի բան է հանդուրժում: Ո՞րն է այն հաղափարության արժեքը, եթե նրա աչքի առջեւ զանգվածաբար կոտորում են անմեղ մարդկանց, - հարցնում էր նա:

Սակայն սուլքանը, հակառակ իր բացահայտ վայրագությանը, Եւրոպայում ուներ նաեւ իր պաշտպանները: Դրանցից մեկը բողոքի ալիքի ամենաբարձր պահին, 1896 թ. ժնեւում խաղաղության մայրաքաղաքում հրատարակեց մեկ ֆրանկանոց մի գրփույկ, որի հիմնական եզրակացությունն այս էր. «Մահմեդականներին հայերից բաժանող ատելությունն այլ պատճառ չունի, քան այն ծայրահեղ շահագործումը, որը նման է հրեաների կողմից Ֆրանսիայում, Անգլիայում, Լեհաստանում եւ Ավստրո-Հունգարիայում իրագործվող շահագործմանը: Կրոնական հարցն այստեղ նշանակություն չունի. պայքարը Եւրոպայում կոչվում է «հակահրեական», իսկ Թուրքիայում՝ «հայկական հարց» (էջ 34): Ֆ. Վիդլլին այստեղ լույս մեջբերում է սուլքանի այդ դպիրի խոսքը, սակայն չի մեկնաբանում, որ դա «հայկական հարցը» օգտագործելու միջոցով Եւրոպայում հակահրեականություն հրահրելու ցածրահոգի մի փորձ էր:

Եւրոպայում Համիդի պաշտպաններից էր նաեւ Ֆրանսիայի Ակադեմիայի անդամ, գրող Պ. Լոտին, որ 40 տարի եղել էր ֆրանսիական ռազմական նախատորմիղում եւ Արեւելի էկզոտիկայի սիրահար էր, մանավանդ համադամ հաշակելիքների եւ ըմպելիքների, որոնց զգալի մասը համտեսել էր Ստամբուլում. Համիդը նրան հաշկերույթի էր հրավիրել իր շէնդ պալատում, Մեջիդիե թանկագին պատվանշան ընծայել:

Պ. Լոտին Փարիզում հրատարակել էր «Հայաստանի կոտորածները» գիրքը, որի մեջ մասնավորապես գրում էր. «Ավա՛ղ, այո, թուրքերը ջարդել են: Սակայն ես պնդում եմ, որ ջարդերի

մասին եղած պատմությունները միշտ էլ չափազանցված են, իսկ մանրամասները՝ անհիմն կերպով տգեղացված: Պնդում եմ նաեւ, որ գործված ոճիւրների ամենամեծ եւ ամենածանր մասն ընկնում է քրդերի վրա, որոնց պաշտպանությունը եւ երբեք չեմ ստանձնել» (էջ 151-152): Ֆ. Վիդլիխեն պարզ ցույց է տալիս, որ դա փարիսեցիական մի փորձ էր՝ ջարդերի հիմնական մեղքը կազմակերպչից զցելու մոլեռանդ մահմեդական քրդերի վրա, որոնք, սակայն, այդքան խոշոր չափերի ոչ մի գործողություն չէին ձեռնարկի առանց «երկրի վրա բարձրալի փոխանորդի»՝ խալիֆի գիտության: Լոտին եւս փորձում էր Հայկական հարցը օգտագործել հակահրեական ֆարզության նպատակով: Նա գրում էր. «Թուրքիայում հայերը իրենց կողմն են փաշում երկրի ամբողջ ոսկին, ինչպես անում էին հրեաները դեռ վերջերս Ռուսաստանում» (էջ 153):

Երբ երիտթուրքական հեղափոխությունը Համիդին դուրս շարտեց իր որջից, առաջինը ուրախացան կայսրության ճնշված հպատակները՝ հայերը, հույները, ասորիները: Նրանք ծափահարում էին եղբայրության եւ հավասարության մասին կրակոտ ճառեր արտասանող ամբոխավարներին: Զինվորական փողային նվագախմբերը «Մարսելյեզ» էին նվագում: Ստամբուլը նույնիսկ ականատես եղավ (ապշեցուցիչ փաստ) գործադուլների:

Սակայն հայերը Ադանայում, Քեսարում, Լաթաֆիայում, Բայազետում, Անտիոքում ականատես եղան բոլորովին այլ տեսարանների. հին վարչակարգի կողմնակիցները խռովություն բարձրացրին, եւ անմիջապես 1909 թ. ապրիլին բռնություններ սկսվեցին հայերի դեմ: «Վիկտոր Հյուգո» ֆրանսիական զրահանավից կատարված լուսանկարներում երեւում են Ադանայով անցնող Սիհան (նախկին Կյոլնոս) գետը նետված հայերի անհամար դիակները: Ֆրանսիացի մի սպա «Ֆիգարո» քերթին ուղարկած իր թղթակցությունում նշում էր, որ այդ օրերին միայն Ադանայի շրջանում սպանվեց երեք հազար հայ:

Ֆ. Վիդլիխեի նկարագրությունների միակ եզրակացությունը այս է՝ թուրք ազգայնամուլները (լինեին դրանք հին վարչակարգի կողմնակիցները թե «հեղափոխական» երիտթուրքերը) դրանով հայտ էին ներկայացնում հայերին եւ մյուս քրիստոնյա հպատակներին, որ Թուրքիայում ինչ սահմանադրություն էլ կյանքի կոչվի, չի պատկանում մյուս ազգերին, որոնք հարկավոր չեն ապագա միատարր, զուտ մահմեդական Թուրքիային: Մի խոսքով՝ դա կլինի հայերին եւ մյուս քրիստոնյաներին կոտորելու սահմանադրություն: Ի հաստատումն այդ իրողության՝ Ֆ. Վիդլիխեն վկայակոչում է Եւրոպայի առաջադեմ կանանցից մեկի՝ Ռ. Լյուսենբուրգի խոսքը, որ ասում էր՝ շատ շուտով պարզվեց երիտթուրքերի իսկական ծրագիրը, եւ նրանք վերադարձան իրենց նախնիների ֆաղափականությանը՝ պարբերաբար արյան լողանքներ կազմակերպելով՝ ստրկության մեջ պահելով նվաճված ժողովուրդներին: Երիտթուրքերի «հեղափոխականությունը» նույն կերպ էր բնութագրում նաեւ Ռ. Լյուսենբուրգի գաղափարակից, բոլշեիկյան դեկավար Լ. Տրոցկին:

Մոտենում էր շարագույժ 1914 թվականը: Բացարձակ իշխանությունն անցել էր երիտթուրքերի ձեռքը: «Հարկավոր է, որ մեկնում եկը կառավարի Թուրքիան, - ասում էին նրանք, - իսկ ինչո՞ւ ոչ մենք» (էջ 81): Թալեաթը, էնվերը եւ Ջեմալը, երեքն էլ Սալոնիկից, մասոնական օրյակների հովանավորությամբ կազմել էին մի յուրահատուկ եռապետություն: «Մեկ բռնակալի փոխարեն՝ երեք բռնակալ», - ասում է հեղինակը (էջ 81-82):

Պատրաստ նոր արկածախնդրության՝ նրանք քեֆվեցին Գերմանիայի եւ Ավստրո-Հունգա-

րիայի կողմը: Ֆ. Վիդլլիեն իրավացիորեն գրում է, որ ոչ ոք չէր կարող գուշակել, թե երիտքուր-
բերը ի՞նչ էին սպասում այդ պատերազմից: Բայց որ այդ սպասման մեջ մի մուր խորհուրդ
կար՝ պարզ էր:

Իշխանական բուրգի գագաթը հենվում էր Շաֆիրի, Ջեդեքի, Նիագիի, Նագրմի, Ռիգայի,
Շեյխ-ուլ-Իսլամի վրա: Վերջինս 1914 թ. նոյեմբերին ջիհադ հայտարարեց:

Մրանցից Նագրմը, կարելի է ասել, երիտքուրբերի գաղափարախոսն էր: Ֆ. Վիդլլիեն գրում
է, թե նա խանդավառ բանաստեղծներից փոխ էր առել մի գաղափար՝ դա ցեղի, նախնիների,
արյան, ազգի, էթնիկական արմատի գաղափարն էր՝ քյուրդիզմը: Ընդ որում, բանաստեղծներ
ասելով՝ Ֆ. Վիդլլիեն երեւի նկատի ունի ֆուտուրիստներին եւ առաջին հերթին նրանց պա-
րագլուխ Ֆ. Մարինետտին, որ հռչակում էր՝ պատերազմը աշխարհի միակ հիգիենան է:

Սակայն Ֆ. Վիդլլիեն այս մոտեցումը երիտքուրբերի հանցախմբի մեջ Նագրմի տեղի ու
դիրքի նկատմամբ, մեղմ ասած, հակապատմական է եւ թողնում է սոսկ գեղարվեստական
հնարանի տպավորություն: Մինչդեռ քյուրդիզմի եւ պանքյուրդիզմի բուն գաղափարական
սերմերն իրենց հետ Միջին Ասիայի տավաստաններից Մերձավոր եւ Միջին Արեւելք, այնուհե-
տեւ Անդրկովկաս, Հայաստան եւ Փոքր Ասիա են բերել քյուրդական հորդանքեր. այդ է վկայում
նրանց ողջ պատմական ընթացքը՝ բնաջնջելով կամ թուրացնելով վերացնել ոչ քուրդ-մահմե-
դական ժողովուրդներին: Առաջին աշխարհամարտի մեջ Թուրքիան մտավ պանքյուրդիզմի հենց
այդ գաղափարախոսությամբ, որը հարողում էր Նագրմը՝ նպատակ ունենալով ցարական Ռու-
սաստանից խլելու ազգային ծայրամասերը եւ ստեղծելու համաքյուրդական մի պետություն:

Ֆ. Վիդլլիեն գրում է, որ Մեծ եղեռնը սկսվեց Պոլսում ապրիլի 24-26-ին՝ 500 հազ մտա-
վորականների ձերբակալությամբ: Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմն այդ մասին
անմիջապես հեռագրում է Բեռլին: Այդ օրերին Ժամանակավորապես չձերբակալվեցին միայն
հայտնի գրող, իրավաբան Գ. Ջոհրապը եւ դաշնակցական գործիչ Վարդգեսը (երկուսն էլ
խորհրդարանի պատգամավոր), որ սերտ բարեկամական կապեր ունեին ներքին գործոց նա-
խարար Թալեաթի հետ: Վերջինս առանձին գրույց ունեցավ Վարդգեսի հետ: Դա նման էր
դահնի եւ զոհի գրույցի, իսկ հայտնի է, որ դահնի գործի մեջ բարեկամական զգացմունքը տեղ
չունի, ուստի օրեր անց այդ երկու երեւելի հայերը եւս բռնեցին մահվան ճամփան:

«Մենք կօգտագործենք այս նպաստավոր կացությունը, որպեսզի այնպես ցափ ու ցրիվ
անենք ձեր ժողովրդին, որ հիսուն տարի ձեր մտքից հանեք բարենորոգման ամեն գաղափար»,
- հայտարարեց Թալեաթը Վարդգեսին: «Ուրեմն դուք մտադրվել եք շարունակել՝ Համիդի գոր-
ծը», - հարցրեց Վարդգեսը: «Այո՞», - եղավ կտրուկ պատասխանը (էջ 95):

Պոլսում Միացյալ Նահանգների դեսպան Մորգենթաունը սկսեց իր գրասենյակում ընդու-
նել ավելի շատ օտար ճանապարհորդների, Թուրքիայի տարբեր նահանգներում առաջնորդ-
յուն իրականացնող եւրոպացի միսիոներների: Նրանցից լսածներից դեսպանի համար պարզ
դարձավ, որ ամենուր տեղի ունեցող իրադարձությունները ոչ թե ինչ-ինչ խժոժություններ են,
այլ մեկ ամբողջ դժոխսային ծրագրի բաղկացուցիչ մասեր: Առանձին մի ազգի բնաջնջելու
ծրագրի, որը նյութել էր կառավարությունը, ուստի պետք էր խոսել հենց նրա անդամի՝ Թալեա-
թի հետ, թեեւ դա դուրս էր դեսպանի իրավասությունից:

Ֆ. Վիդլլիեն մեջբերում է այդ հատկանշական խոսակցությունը. «Ինչո՞ւ եք հետաքրքրվում

հայերով, դուր հրեա եմ, իսկ այդ մարդիկ փրստոնյա են», - կոպիտ հարցնում է Թալեաթը:

«Երեւի դուր չեմ հասկանում, որ ես այստեղ եմ ոչ թե հրեայի հանգամանքով, այլ որպէս ամերիկյան դեսպան», - պատասխանում է Մորգենթաուն:

«Կարելի չէ վստահել հայերին, - կտրուկ ավելացրել է Թալեաթը, - եւ, բացի այդ, նրանց հանդեպ մեր վերաբերմունքը Միացյալ Նահանգների գործը չէ» (էջ 99-100):

Այո՛, ավելացնում է Ֆ. Վիդլիքեն, դա միայն թուրք ոստիկանների, զապիքիների, Մեշվերեք եւ Թեշվիլաք-ի-Մահսուսիե հատուկ կազմակերպությունների գործն էր, որոնք ստեղծվել էին պատերազմի բոլոր տակ անյուր ոճիւր կազմակերպելու համար:

Այստեղ հեղինակը բացահայտում է ջարդարարների դժոխային խոհանոցը, նշելով, որ այդ կազմակերպությունները ուղղակիորեն կախված էին Միություն եւ առաջադիմություն կոմիտեից, եւ կառավարության ոչ մեկ հաստատություն իրավունք չունէր միջամտելու դրանց գործերին: Այդ գործունեությունը ղեկավարում էին Նազըմը եւ Շաֆիը, իսկ անհրաժեշտ փողը (որովհետեւ փողը մնում էր պատերազմի շրջը) հատկացվում էր երիտթուրքերի կուսակցության գաղտնի ֆոնդերից, հափշտակված միջոցներից. զենքերը բաժանվում էին պետական զին-պահեստներից: Ողջ Արեւմտյան Հայաստանը եւ կայսրության հայաշատ հաղափները պատված էին այդ կազմակերպությունների գործադիր մարմինների ցանցով: Նրանց հրահանգները կատարող խմբերը կոչվում էին շեքեներ, որոնք համարված էին բանտերից ազատ արձակված փրեական հանցագործներով. վերջիններս ստացել էին երկու բան՝ ազատություն եւ զոհերին թալանելու իրավունք: Սեւ գործի մի մասն էլ փուրջ խուժանի եւ ցեղապետերի բաժինն էր: Եւ պատահական չէ, որ այսօր Թուրքիայի խորհրդարանում թուրք եւ փուրջ պատգամավորները հանդես են գալիս փոխադարձ մեղադրանքներով՝ փորձելով մեղքը գցել մեկը մյուսի վրա:

Պոլսում Միացյալ Նահանգների դեսպան Մորգենթաուն փորձում էր էնվերսին հասկացնել, որ այդ ճանապարհով երկիրը տնտեսապես կսնանկանա: Սակայն թուրք ջարդարարը եւ հաղափակիրը ամերիկացին տրամագծորեն հակառակ պատկերացում ունեին տնտեսական հարցերի մասին: Ի՞նչ սնանկացման մասին կարող էր մտածել էնվերը, եթե կողոպուտի խոշոր մասը գնում էր կուսակցությանը, իսկ մյուս մասը՝ շեքեներին:

Ֆ. Վիդլիքիի օգտագործած բոլոր փաստաթղթերում (դեսպանների հեռագրեր եւ զեկուցագրեր, մամուլի արձագանքներ, միսիոներների նկարագրություններ) ակնհայտորեն արտացոլվում է այն իրողությունը, որ ջարդերը կազմակերպել էր կառավարությունը: Իսկ նպատակը մեկն էր՝ թուրքահպատակ հայությանը բնաջնջել որպէս անցանկալի, ոչ մանկեղական, «գլավուր» տարրի:

1915 թ. սեպտեմբերի 16-ի իր համարում ամերիկյան «Նյու-Յորք Թայմս» թերթը գրում էր. «Թուրքիայից եկող տեղեկությունները բոլորն էլ համընկնում են հայերի դեմ թուրքերի գործադրած սարսափելի վայրագություններին: Ննթաղվում է, որ խնդիրը վերաբերում է բնաջնջման պաշտոնական մի ծրագրի, որով նախատեսվում է 800.000-ից մինչեւ մեկ միլիոն հոգու սպանություն» (էջ 122):

Էրզրումում, Տրապիզոնում, Երզնկայում, Մամախաթունում իր տեսածի հիման վրա գերմանացի սպա Շտանգեն եզրակացնում էր. «Կատարվածը կարող ենք համարել միանգամայն ստույգ. հայերի տեղահանությունը եւ բնաջնջումը որոշվել եւ կազմակերպվել էր երիտ-

թուրերի կողմից եւ գործադրվեց զինվորականների ու կամավորների ջոկատների օգնությամբ» (էջ 125):

Ֆ. Վիդլիեն վկայակոչում է նաեւ ամերիկյան հյուպատոս Լ. Դեյվիսի զեկուցագիրը, որում նշվում էր. «Գաղտնիք չէ, որ նախատեսված ծրագիրը միտում էր կործանել հայ ժողովրդին որպես ցեղ: Ես չեմ հավատում, որ աշխարհի պատմության մեջ երբեւիցե գործադրված լինի մի կոտորած այդքան ընդհանրական եւ այդքան արմատական, որքան այն կոտորածը, որ կատարվում է այս պահին այս շրջանում, եւ ոչ էլ մի ծրագիր այնքան անավոր եւ այնքան սատանայական, որը երբեւիցե հղացված լինի մարդու մտքում» (էջ 137):

Ֆ. Վիդլիեն փաստական նյութերով վեր է հանում այն սկզբունքային տարբերությունը, որը կար մի ողջ ազգի բնաջնջման հաղափականության նկատմամբ Միացյալ Նահանգների եւ Գերմանիայի դեսպանների դիրքորոշումների միջեւ: Այդ տարբերությունը հստակ երեւում էր Վանզենհայմի բացատրություններում: Ահա դրանցից մեկը. «Հասկանալի է, որ այն միջոցառումները, որոնց ուզում են դիմել թուրքերը, մեր թշնամիների ամբողջ ճամբարում առաջ պիտի բերեն շատ դժգոհություններ եւ պիտի օգտագործվեն մեր դեմ: Ստույգ է, որ դրանք չափազանց ծանր են հայ ազգաբնակչության համար: Այսուհանդերձ կարծում եմ, որ եթե կարողանանք այդ միջոցառումների գործադրման ձեւերը մեղմացնել, ապա սկզբունքորեն դրանց չպետք է հակադրվենք» (էջ 119):

Նա մոտիկից հետեւում էր իրադարձություններին եւ շատ լավ գիտեր, թե որն է այն սահմանը, որը անցնելը կնշանակեր միջամտել դաշնակից երկրի ներքին գործերին: «Ակնհայտ է, - նշում էր նա, - որ հայերի տեղահանությունը պատճառաբանված չէ միայն պատերազմական նկատառումներով: Ներքին գործոց նախարար Թալեաթ բեյը վերջերս բացեփառ հայտարարեց դոկտ. Մորդմանին (ով այժմ պաշտոնի է կոչված կայսերական դեսպանատանը), որ Բարձր Դուռն ուզում է օգտվել Համաշխարհային պատերազմից՝ արմատապես վերացնելու իր ներքին թշնամիներին, առանց անհանգստանալու օտարերկրյա դիվանագիտական միջամտությունից» (էջ 122-123):

Ֆ. Վիդլիեն վկայակոչում է եւս մեկ փաստ, թե Թալեաթը ինչպես էր գնահատում իրադարձությունները: Գերմանացի մի միսիոներ շատ ջանքերից հետո հաջողում է հանդիպում ունենալ էնվերի հետ: «Դուր արդյո՞ք տեղյակ եմ եւ համաձայն եմ այն ամենի հետ, ինչ տեղի է ունենում ներքին ճակատում», - հարցնում է միսիոները: «Ամբողջ պատասխանատվությունը վերցնում եմ ինձ վրա», - պատասխանում է ռազմագործը (էջ 126):

Այս խոսակցությունը, ավելացնում է Ֆ. Վիդլիեն, տպագրվել է գերմանական «Դեր Յոխենտ» ամսագրում, երբ Թալեաթը Բեռլինում էր եւ այդ պատասխանատվությունը դեռեւս իր վրա չէր վերցրել Սողոմոն Թեհլեյանի գնդակի տեսքով:

1915 թ. օգոստոսին իտալական Մեսաջերո» թերթը տպագրեց Տրապիզոնում Իտալիայի նախկին հյուպատոս Գորրինիի կարծիքը կոտորածների մասին, որոնց ակնատեսն էր եղել. «Դա իսկական բնաջնջում էր: Անմեղների կոտորած, աներեւակայելի ոճիւր, մի սեւ էջ, մարդկության ամենասրբազան իրավունքների բացահայտ ոտնահարում» (էջ 139):

Երիտթուրքերի պարագլուխներից Ջեմալը հետագայում պիտի հայտարարեր. «Ես բացարձակապես տեղյակ չեմ եղել այն դրդապատճառներին, որոնք կառավարության իմ ընկերներ-

րին մղել են հայ ազգաբնակչությանը տեղահանելու որոշմանը. նրանք այդ մասին ինձ հետ չեն խորհրդակցել» (էջ 138):

Ֆ. Վիդլիեն հատուկ ուշադրություն է դարձնում պատերազմի հետ ոչ մի կապ չունեցող հայ խաղաղ բնակչության ջարդի կազմակերպիչներից մեկի՝ Ջեմալի զգուշությամբ ըմտրած «տեղահանություն» բառին եւ այն մեկնաբանելու համար բերում է եւրոպացի միսիոներների եւ ճանապարհորդների բազմաթիվ վկայություններ, որոնցում պարզվում է մահվան այդ երթի ողջ ահավորությունը: Ահա նրա մեջբերած վկայություններից մեկը, որը պատկանում է ամերիկացի գրող, հրապարակախոս Ջոն Ռիդին, որ այդ ժամանակ «Մետրոպոլիտեն մագազին» հանդեսի թղթակիցն էր եւ Եւրոպա էր գործուղվել՝ մոտիկից ծանոթանալու պատերազմական իրադարձություններին: Թուրքական իշխանությունները նրան թույլ չէին տվել մոտենալու ռազմաճակատի գծին: «Էնվեր փաշան ինձ ասաց, որ ոչ մի ամերիկացու չի թույլատրվում ուղեկցել բանակին», - գրել է նա (էջ 130): Սակայն Ջ. Ռիդը նույնիսկ Ստամբուլում զգացել է, թե իրականում ինչ է կատարվում: «Կասկածանք չհարուցող նկուղներում եւ շտեմարաններում ես հանդիպեցի հայերի, որոնք ավելի քան հինգ ամիս քաֆնվել էին՝ խուսափելու ափսոսից, որը ստույգ մահ էր նշանակում Փոքր Ասիայի անապատներում», - գրել է նա (էջ 132):

Իսկ ինչ վերաբերում է մասնավորապես Ջեմալին, ապա նա, տեսնելով պատերազմի անհաջող ելքը, մտմտում էր հրաժարվել նախկին դաշնակցից՝ պարտված Գերմանիայից, այսինքն՝ իր անցյալից, լեզու գտնել հաղթողների հետ, խոստանալով պաշտպանել ...հայերին, արշավել Կոստանդնուպոլսի վրա, հեղաշրջում իրականացնել, ստանալ սուլթանի տիտղոս (որը, իր կարծիքով, իրավամբ իրեն էր պատկանում): Այդ տիտղոսը շնորհելը, անշուշտ, այժմ մեծ տերությունների իրավասությունն էր, բայց նախկին բոլոր հողերի վրա իշխանություն ստանալ՝ հիվանդ երեւակայություն էր, քանզի այդ հողերն արդեն բաժանված էին Ֆրանսիայի եւ Անգլիայի միջեւ. էլ ինչի՞ համար էր պատերազմը, հարցնում է Ֆ. Վիդլիեն:

Պոլսում Գերմանիայի դեսպան ֆոն Վանգենհայմին փոխարինեց Հ. Լանգբերգը: Նա 1915 թ. օգոստոսին, երբ մեծ ռեիսն իր հիմնական ծավալով արդեն գործված էր, մի խիստ գրություն ներկայացրեց թուրք կառավարությանը. «Գերմանիայի դեսպանությունն իր կառավարության հրամանով ստիպված է մեկ անգամ ես բողոքել այս զարհուրելի արարների դեմ եւ իր վրա չի վերցնում այն հետեւանքների պատասխանատվությունը, որոնք կարող են առաջ գալ այդ գործողությունների պատճառով» (էջ 136):

«Հաստատված չէ՝ դեսպանն այդ միջամտությունն իր կառավարության հրահանգով էր արել, թե՞ անձնական նախաձեռնությամբ», - գրում է Ֆ. Վիդլիեն (էջ 136): Ինչպես էլ եղած լինի, Գերմանիայի դեսպանի գրությունը վկայում է, թե որքան մեծ էին պատերազմի ծագրերից չբխող ռեիսի չափերը, որ նույնիսկ Թուրքիայի ռազմական դաշնակից Գերմանիայի դեսպանը հարկ էր համարում հայտարարել, թե իր երկիրը պատասխանատվություն չի ստանձնում ռազմաճակատի գծի ետեւում՝ Թուրքիայի խորհրդում տեղի ունեցող իրադարձությունների համար:

Կայսրությունում պատերազմի պատրվակով բոլոր տեսակի թղթակցությունները, հեռագրերը խիստ վերահսկողության տակ էին առնված, լուսանկարահանումները եւ մանավանդ կինոնկարահանումները կտրուկ արգելված էին, իսկ այդ տեսակի ինչ նյութեր էլ կան՝ բոլորը ստեղծվել են իշխանությունների աչից հեռու:

«Ապօրինաբար ստուգելով դիվանագիտական խողովակներով դրսից ուղարկվող ծրարներ եւ փաստաթղթերը, - գրում է Ֆ. Վիդլլիեն, - Թալեաթը տեղեկանում էր այն դրամական փոխանցումների մասին, որ զանազան ընկերություններ, ազգականներ եւ գրասեւ մարդիկ փորձում էին Միացյալ Նահանգներից հասցնել հայերին»: «Ինչո՞ւ այդ փողը մեզ չե՞մ տալիս, - հարցնում էր նա Մորգենթաուին, - մենք դրա կարիքը նույնքան ունենք, որքան հայերը»: «Այժմ նրանք բոլորը մահացել են առանց ժառանգ թողնելու, - մեջբերում է հեղինակը Թալեաթի խոսքերը: - Հետեւաբար նրանց դրամը հասնում է կառավարությանը, նա է, որ պետք է օգտվի դրանից: Չէ՞ որ նրանք օսմանյան ֆաղաֆաղներ են» (էջ 132-133):

Կայսրությունում հայերը, բացի այդ, կյանքի ապահովագրության փաստաթղթեր էին ստորագրել Արեւելքում գործող ընկերությունների հետ: Ֆ. Վիդլլիեն նշում է դրանցից երկուսը՝ New York Life Insurance Company եւ Equitable Life of New York: Սակայն այսօր գոհերի իրավահաջորդները հնարավորություն չունեն հետ ստանալու այդ փաստաթղթերով նախատեսված գումարները:

Պատերազմի եւ նրա դժոխային խոհանոցում նյութված ցեղասպանության կուլիսների հետեւում տեղի էին ունենում ֆինանսական մութ գործարքներ: Ֆ. Վիդլլիեն գրում է, որ երիտթուրքերը հայերից եւ մյուս ֆրիստոնյա ժողովուրդներից թալանված փողերից առատ բաժին էին հանում եւրոպական մամուլի ծախս օրգաններին: 600.000 ֆրանկ՝ Պըտի Փարիզիենին, 250.000՝ Գալուային, տասնյակ հազարավոր գումարներ՝ Լիբր Պարոլին, Օրորին, Աֆսինին, Էֆեսիսիորին, Էնտրանսիժանին, եթե թվելու լինենք միայն ֆրանսիական թերթերը: Գովազդի մագնատ Լ. Ռենիենին վճարվել էր 500.000 ֆրանկ՝ ոսկով:

Անհամեմատ ահուդի գումարներ էին նստում երիտթուրքական կառավարության հաշվին: Տեղին կլինե՞ր, եթե Ֆ. Վիդլլիեն այստեղ նշեր, որ ֆրիստոնյա ժողովուրդների ժառանգության վրա հիմնված հոշվորական պետության հաշվին էր նստում նաեւ ամենամեծ արժեքը՝ Արեւմտյան Հայաստանի հողը, որի բնիկ տերերը կոտորվում էին:

Մորգենթաուն, նախքան Թուրքիայից ընդմիշտ հեռանալը, վերջին անգամ գնաց Թալեաթի մոտ. «Իսկ հայերը», - հարցրեց նա ցեղասպանին: Վերջինիս դեմքը ջղածվեց. «Ինչ կարիք կա նորից խոսելու նրանց մասին, - ասաց նա, - նրանց հաշիվը մաքրեցինք, վերջացավ» (էջ 155): Բնորոշ է, որ Ֆ. Վիդլլիեն մեջբերած վկայություններում ներքին գործոց նախարարն իրեն տրված բոլոր հարցերի պատասխաններում չի փորձում ընտրել զգուշավոր բառեր եւ արտահայտություններ, այլ խոստովանում է՝ «... նրանց հաշիվը մաքրեցինք»:

Վերջաբանի հասցնելով իր պատումը՝ հեղինակը գրում է, որ պատերազմը ավարտվեց Թուրքիայի եւ ռազմական, եւ բարոյական խայտառակ պարտությամբ: Երիտթուրքերի պարագլուխները փախան տարբեր երկրներ՝ Գերմանիա, Խորհրդային Միություն, Միջին Ասիա կամ Վրաստան:

Նրանք ուզում էին Խորհրդային Միությունում՝ բոլշեիկների, Միջին Ասիայում՝ բասմալների միջոցով ուժեր համախմբել պանթուրքիստական-խալաֆական գաղափարների շուրջը: Իզուր չէ, որ Բաքվում բոլշեիկների հրավիրած Արեւելյան ժողովուրդների համագումարում ընթերցվեց էմլերի հայտարարությունը: Նրա գաղտնի խնդիրն այս էր՝ «ես պետք է ոտքի կանգնեցնեմ իսլամական հեղափոխականների կազմակերպությունը» (էջ 191):

Երիտքուրբ պարագլուխներին հեռակա դատ եւ մահավճիռ էր սպասում իրենց իսկ երկրում, որը, սակայն, զուտ խորհրդանշական մի որոշում էր. այդ վճիռը պետք է ի կատար ածվեր այն երկրներում, որտեղ նրանք Պոլսից փախուստ տալուց հետո թափառում էին իրենց հիվանդ երագների հետեւից:

Ֆ. Վիդլլին մեջբերում է մի հատված ֆեմալական Թուրքիայի փրեական օրենսգրքի 181 հոդվածով նրանց նկատմամբ կայացված մահավճիռից, որում ասվում էր. «Հարցաքննությունից բխող էական եզրակացությունն այն է, որ հայերի տեղահանության ընթացքում գործված ոմիրները առանձին եւ տեղական բնույթ ունեցող փաստեր չեն, այլ վերոհիշյալ անձներից կազմված մի ուժ դրանք կանխամտածել եւ գործադրել է կա՛մ գաղտնի հրամաններով, կա՛մ բանավոր կարգադրություններով» (էջ 184):

Ֆ. Վիդլլին չի մեկնաբանում, որ երիտքուրբական պարագլուխների նկատմամբ ֆեմալական դատարանի կայացրած մահավճիռը զուտ խորհրդանշական մի որոշում էր, որով հետպատերազմյան Թուրքիան փորձում էր ձեւավորել իր «հանրապետական» ցուցանակը: Քեմալականները ոչ միայն ներքուստ գոհ էին իրենց նախորդների հայաջինջ գործունեությունից, այլեւ շարունակեցին նրանց ֆաղափականությունը: Հայտնի է, որ Թալեաթի այրիի հետ մի մասնավոր զրույցի ժամանակ Աթաթուրքը նրան ասել է. «Թալեաթ փաշան մեծ գործ արեց քուրբ ժողովրդի համար»:

Ավարտելով իր գիրքը՝ Ֆ. Վիդլլին գրում է, թե պատերազմն ավարտվեց, բոլոր եւրոպացի դեսպաններն ու հյուպատոսները, միսիոներները, բժիշկներն ու բուժֆույերը վերադարձան իրենց երկրները, այլեւս ոչ մի բան չկար բանակցելու, ոչ մեկը չկար խնամելու եւ բուժելու: Ամեն ինչ ավարտված էր:

Երիտքուրբ պարագլուխներն էլ իրենց տեղը գնացին հայ վրիժառուների ձեռքով: Պատմությունը, փաստորեն, նրանց էր թողել քուրբական դատարանի հեռակա վճիռներն ի կատար ածելու առաքելությունը:

Թեեւ Հայոց ցեղասպանությունը հիմնավորապես ապացուցված է պետք եղածից անհամեմատ ավելի շատ փաստաթղթերով, սակայն վավերագրերի հերթական ժողովածուն, ինչպիսին է Ֆ. Վիդլլինի «Թուրքական գիշեր»-ը, միշտ էլ կարող է նոր նյութ տալ այդ թեմայի ուսումնասիրությունն առավել խորացնելու համար:

ՅՈՒՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ